

## Ջրային ռեսուրսների քաղաքականություն

Ջուրը կենսական նշանակություն ունի մարդկային և համայնքային զարգացման համար: Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը ջանում է սահմանափակել իր ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա և նպաստել ջրային ռեսուրսների կառավարման գործունեությանն այն համայնքներում, որտեղ գործում է ընկերությունը: Մենք կապահովենք, որ մեր կողմից ջրի օգտագործումը հաշվի առնի մեր համայնքների կարիքները:

Մենք հավատում են, որ մասնավոր հատվածը առանցքային դերակատարություն ունի ջրային ռեսուրսներին վերաբերող օրվա մարտահրավերներին ճիշտ լուծումներ գտնելու հարցում: Մենք ընդունում ենք, որ մարդկային զարգացումը և կլիմայի փոփոխությունը էապես կազդեն ջրի մատչելիության վրա և մենք կաշխատենք մեղմել փոփոխությունները և հարմարվել դրանց:

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության ուղղակի ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա հիմնականում շշալցման գործարաններում ջրի օգտագործման արդյունք է: Անուղղակի ազդեցությունը արդյունք է արտադրանքի բաղադրամասերում առկա, այսպես կոչված «վիրտուալ ջրի» և ավելի քիչ չափով՝ փաթեթավորման:

Մեր Շրջակա միջավայրի քաղաքականությանը համահունչ, մենք հանձնառում ենք.

- Հնարավորինս նվազեցնել գործառնությունների ազդեցությունը՝ կրճատելով ջրի օգտագործումը և ապահովելով, որ կեղտաջուրը մշակվի այն աստիճանի, որը այնտեղ հնարավոր է ջրային կյանքը:

- Գնահատել ապագայում ջրի առկայությունը և նվազեցնել ջրի օգտագործմանը վերաբերող շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը:
- Աշխատել մատակարարների հետ հումքի՝ մասնավորապես այնպիսի գյուղատնտեսական ապրանքների, ինչպիսիք են շաքարը և մրգերը, այսպես կոչված, «ջրային հետքը» հասկանալու համար:
- Ներգրավել համայնքներին՝ տեղական և միջազգային համագործակցության ծրագրերի միջոցով ջրային ռեսուրսների պահպանումն ու իրազեկությունը ավելացնելու նպատակով:
- Կազմակերպել համայնքներին ջրի մատակարարումը արտակարգ իրավիճակներում և աղետներից հետո:
- Տեղական և միջազգային մակարդակով մասնակցել ջրի ստանդարտների և քաղաքականությունների զարգացմանը՝ համագործակցելով առանցքային շահառուների հետ:
- Աշխատել կազմակերպությունների և նախաձեռնությունների հետ ինչպիսիք են ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագրի Ջրային Մանդատը (UN Global Compact Water Mandate)՝ ջրի կառավարման փորձը տարածելու և զարգացնելու նպատակով:

Մենք համակողմանիորեն և թափանցիկ կերպով զեկուցում ենք մեր կողմից ջրի վրա ազդեցության և ջրի հետ կապված գործունեության մասին՝ մեր հիմնական շահառուների հետ խորհրդակցելով:

Որպես գլխավոր գործադիր տնօրեն ես պարտավորվում եմ հավատարիմ մնալ Ջրային կառավարման սույն քաղաքականությանը, որը ճանաչվել և հաստատվել է Տնօրենների խորհրդի Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության

կոմիտեի կողմից: Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում այս ծրագրի արդյունավետ իրականացման համար:

Դիմիտրիս Լոյիս

Գլխավոր գործադիր տնօրեն